

## ԳՐԱԽՈՍՔՆԿԱՆ—ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

**Մարտիրոս Յարուբինեանց.** Բացատրական բառզիրը (օտար ազգի բառերի և օտարազգի բառերի ու դարձուածքների, սրբնի դորձածական են նայոց պրականութեան մէջ։ Ալեքսանդրապոլ 1912 թ.։

1. Մեր մէջ վաղուց զգացւում էր հայոց զրականութեան մէջ գործածող օտար բառերի բացատրական մի բառզրբի պակասը։ Եւրոպական կեանքի ու գրականութեան, կուլտուրայի և աշխարհայիշացքի ազդեցութիւնը գնալով խտանում է, յարաբերութիւններն ու շփումները գնալով յաճախանում, սերտանում։ Նորանոր գաղափարները բնականաբար նոր խօսքեր ու դարձուածքներ են որոնում։ շինւում են բազմաթիւ նոր բառեր, առաջ են գալիս տեղի և անտեղի, համով և անհամ թխուածքներ։ և շատ դէպքերում էլ նոր գաղափարների, նոր մտքերի համար վերցնում ուրիշ լեզուների մէջ արդէն պատրաստի բառերն ու դարձուածքները շատ քիչ փոփոխութիւններով ու յաճախառանց փոփոխութեան։ Նոր կուլտուրայի և նոր մտքերի յիտելց ու նրանց հետ միաժամանակ միշտ գալիս են և համապատասխան բառեր և դարձուածքներ։

Յատկապէս վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում հայոց գրականութեան մէջ մտել են բազմաթիւ օտար բառեր և ասացուածներ ու դարձուածքներ, որոնց մեծ մասը թէև կարող էր իւր հայերէն հարազատ ու մաքուր թարգմանութիւնն ունենալ, բայց գործ է ածւում առանց քաշուելու անխորիք եւրոպական շատ լեզուներից-յատկապէս ֆրանսերէնից, գերմաներէնից, ուռւսերէնից ահազին քանակութեամբ բառեր են մտնում հայոց գրականութեան մէջ ու գործածում առանց բացատրութեան-կարծէս մերւում մեր լեզուին։ Նոր օտար բառերի հոսանքը յորդանում է յատկապէս վերջին տասնամեկի ընթացքում, երբ գաղափարների և յոյզերի բախիւնը աւելի զգալի է դառնում, երբ մտաւոր շերտաւորութիւնների հաստատուն է առաջ գնում և ներքին հոգեկան ու արտաքին նիւթական պայքարին հարուածների տարափի տակ նոր մտքեր են ձուլում, նոր իդէաներ լոյս աշխարհ գալիս ու թեաւորւում թոշում երկրէ երկիր, աշխարհէ աշխարհ, արհամարելով ամեն սար ու լեռ, սահման ու սահմանագից։ Այդ օրերին էր ահա, մտքի և սրտի ինտենսիւ-

աշխատանքի այն օրերին ահա մեր լեզուի մէջ բազմաթիւ նոր բառեր մտան ու կարծես քաղաքացիութիւն ստացան միանգամից, որովհետև նրանց արտայայտող իդէաներն և մտքերը վաղուց քաղաքացիութիւն գտել էին: Այժմ մեր գրականութեան մէջ թէ գեղարուեստական և թէ գիտական, և մանաւանդ մամուլի մէջ, սովորական է մի շարք օտար բառերի, բազմաթիւ օտար դարձուածքների գործածութիւնը:

Բնականաբար կարիք է զգացւում այդ և դրանից առաջ մեր գրականութեան մէջ մտած բազմաթիւ այլ օտար բառերի և օտարաբանութիւնների համար մի բացատրական բառարան կազմել: Այդ կարիքը խորապէս զգացել է և դրան բաւականութիւն տալու համար հանդէս է եկել պ Մարտ. Յարութիւննեանը իւր «Բացատրական բառ գիրք» ով, որի մասին մենք մի փոքր երկար կուզէինք խօսել:

Տ ինչպէս բառարանի ճակատին գրուած է՝ մենք գործպէտք է ունենանք այս Բառզրքի մէջ այնպիսի «օտարազգի բառերի և օտարազիք բառերի ու դարձուածքների հետ, որոնք գործածական են նայոց գրականութեան մէջ»: Ապա իւր Նախաբանի մէջ խօսելով պ. Տէր Ղազարեանի կազմած օտարազգի բառերի հանրամատչելի բառարանի մասին, պ. Մ. Յարութիւննեանը մեղադրում է նրան, որ նա «հետամուտ է եղել հանրագիտակի նպատակների»: իսկ ինքը, պ. Յարութիւննեանը «ցանկացել է տալ միայն օտար բառերի բացատրութիւն, թէև դրանցից ոմանք էլ, ինչպէս յիշուած է զրքիս երեսին, համեմատարար ընդարձակ բացատրութիւն են ստացել, բայց ոչ հանրագիտարանի մտքով»: Ես կըսկսեմ հէնց այս վերջին կէտից:

Ուրեմն պ. Յարութիւննեանը ուզում է զերծ լինել հանրագիտակի միտումներից և հակումներից: Ինձ թւում է սակայն, որ նրա «բացատրական Բառզիրքը» ոչ միայն զերծ չէ հանրագիտակի նպատակներից», այլ և բաւականին մեծ քանակութեամբ հանրագիտական բալլաստ է քաշ տալիս իւր յետերից: Ճիշտ է, պ. Յարութիւննեան չի հետեւում պ. Տ. Ղազարեանին և չի բացատրում օրինակ-աշխարհագրութիւն, ապահովագրութիւն, աւետարան, բանաւոր, գաղթ, գործածող, ճեղինակութիւն, հողատիրութիւն . . . որոնք զուտ հայերէն բառեր են և յարմար են գալիս միմիայն հանրագիտակ բառարանի, բայց միւս կողմից նա իւր բառզրքի մէջ մտցնում է ահազին քանակութեամբ այնպիսի բառերի և դարձուածքների ու անունների բացատրութիւն, որոնք թէի օտար են, բայց տեղ կարող են բռնել միմիայն հայերէն հանրագիտակ բառարանի մէջ: Բերեմ մի քանի օրինակ. (առաջուց ասեմ, որ ես ուշի ուշով հետեւել եմ միմիայն Ա. և Բ. տառերին, մնացածը թերթել եմ):

Հայոց գրականութեան մէջ գործածող օտար բառերի և դարձուածքների բացատրական բառզրքի մէջ ի՞նչ տեղ կարող է ունենալ օրինակ 1891 թուին Գերմանիայում հիմնուած աշխարհիս բոլոր գերմանացիների շահերը պաշտպանող միութիւնը-որը կոչւում է Ալդոյշ-որը բաւականին ընդարձակ բացատրուած է: Այդ բառզրքի մէջ երբէք չպիտի ընկեն Ալեմանիաներ («սոցեալ յեղափոխական բանւորական կուսակցութիւն» Ֆրանսիայում իւր պարագլուխ Ալեմանի անունով-հիմնուած 1899 թ., որը այժմ միացել է ընդհանուր ս. կուսակցութեան...), Ալգենախեաններ («Գերմանիայի բանւորութեան այն մասը, որը ամենից առաջ ընդունեց Կարլ Մարքսի վարդապետութիւնը և կազմակերպուեց իրեւ Սոցեալ Դեմոկրատ բանւորական կուսակցութիւն 1869 թուին Ալգենախ քաղաքում....») Անգրիսուցիալիսներ (Ալդպէս «կոչւում են 1905 թուին Դոքտոր Ֆրիդհերդի պարագլխութեամբ գերմանական Սոցեալ-դեմոկրատիայից անջատուած մի խմբակը Ա. և աննպատակ և անօգուտ են համարում....»): Հայոց գրականութեան և մամուլի մէջ երբէք չէ գործածուած և չի գործածուի առանց լրացուցիչ բացատրութեան անիսի Կորնլաու լիգա դարձուածքը (պէտք է լինի անտի Կորնլոու լիջ) որը մի պատմական երեսյթ է անգլիական կեանքի մէջ և ով գործ է ածում գրականութեան մէջ այդ գարձուածքը, անշուշտ ստիպուած կը լինի բացատրել նաև դրա իմաստը՝ որովհետեւ դա զուտ մասնակի մի երեսյթ է և չունի ընդհանրացնող, համայնական ընոյթ: Պ. Յարութիւննանը կարիք է զգացել սակայն այդ բառն ևս դնել և ընդարձակ բացատրել. («հացահատիկների Քօրէնքին հակառակ միութիւն. անգլիակոն գործարանատէրերի մի ընկերութիւն, որ հիմնուեց 1839 թուին Մանչեստր քաղաքում և տարածուեց ամբողջ երկրում...»): Բոլորովին զարմացնում է ինձ, թէ այս բառարանի մէջ ի՞նչ գործ ունին Ալեման Խրակիլս («1860 թուին Պարիզում հիմնուած մի ընկերութիւն է, որ տարածուած է ամբողջ աշխարհում և նպատակ ունի պաշտպանել հրէութիւնը...») Անտիմակիաւել («կոչւում է Պրուսիայի թագաւոր Ֆրիդրիխ Մեծի մի գրուածքը ուղղուած Մաքիաւելիի «Իշխանը» գրուածքի ղէմ»), Անբար («կոչւում էր մի կուսակցութիւն թուրքիայի պարլամենտում, կազմած ոչ միայն թիւրքերից, այլ և ուրիշ ազգերի ներկայացուցիչներից, գիւմադրելու Միութեան և Յառաջադիմութեան կոմիտէին: Նրա ծրագրում կար». .): Օտար բառերի այս բառարանում մենք բաւականին ընդարձակ տեղեկութիւն ենք ստանում էզուարդ Բերնըշտայնի քարոզած վարդապետութեան և գործունէութեան մասին (Բերնշտայնականութիւն), ծանօթանում ենք Տրովական պատերազմում յունաց ամենամեծ հերոսի հետ, իմա-

Նում ենք թէ ինչպէս նա արագուտն ու խարտեաշէ, թշնամիների համար ահ ու սարսափ, իսկ բարեկամների համար ապաւէն. անսանձ իւր բարկութեան մէջ, բայց մհծահոգի, մեղմ. հնազանդ աստուածներին. և գեռ շատ ուրիշ բաներ (Աքիլես), այս բառարանը մեզ պատմում է, թէ ովքեր են այժմեան անգլիացիք և ինչ ցեղերի խառնուրդից են նրանք առաջ եկել (Անգլօսաբան), թէ բրդի որ տեսակը փափուկ է և մետաքսակերպ (Անգուայի բուրդ), թէ ինչպէս է կոչւում արարական թագաւորների պալատը Գրանադայում (Ալիամբրա), թէ որն էր այն հոսանքը ոռւս սոցեալդեմոկրատիայի մէջ, որը ցանկանում էր չորրորդ (?) պետական Դումայից յետ կանչել ու գ. պատդամաւորներին (Ա.Տզաւիսներ)։ և դրանց նման շատ ուրիշ բաներ էլ է պատմում մեզ պ. Յառութիւնեանի բառդիբը, որոնք բոլորն էլ շատ տեղին են մի որևէ հանրագիտակ բառարանի մէջ, որոնք սակայն միանգամայն անտեղի են օտար բառերի բացատրական այս բառդրքում, մասնաւոնդ որ ինքը հեղինակն էլ զիտակցարար այդ մտքով պայքարում է ուրիշների հետ, ինչպէս վերեւում ակնարկեցինք, սակայն դժբախտաբար ինքն ևս մեղանչում է և յետեւ լինում «հանրագիտակ նպատակների»։ Այդ կատեգորիային պատկանում են բացի վերեւում յիշածներից նաև հետեւեալ բառերը, որոնք ամենեին տեղ չպիտի ունենային այս բառարանում, որոնք սակայն քիչ թէ շատ ընդարձակ բացատրութիւն են գտել նրա մէջ։ համեմատել

Ագրարիէրներ

Բարդուղմեան գիշեր

Ազրար սոցիալիստներ

Բարբարոսսա

Ակսիոն գիրեկտ

Բարկարօլա

Անսոնա

Բէզական հողեր

Ար

Բէղէլը իլթիզամ

Բայրոնիզմ

Բէնեգիկանան

Բարուվիզմ

Բէնօրէր թեմար

Բարիզմ

Բաքոս

Բանդողա

Բիւզանդական ոճ և շատ ուրիշներ

3. Մինչև այժմ ես փորձեցի ցոյց տալ, որ այս Բառդրքի մէջ բաւականին քանակութեամբ բառեր և դարձուածքներ կան, որոնց տեղը հանրագիտական բառարանն է և ոչ այստեղ։ Այժմ կանցնեմ հետեւեալ կետին և կաշխատեմ հիմնաւորել իմ այն եզրակացութիւնս, թէ այստեղ դործածուած օտար բառերը, որոնք պէտք է որ դործածական լինին հայոց գրականութեան մէջ, իրանց մէջ պարունակում են ահագին տոկոս եւրոպական բառեր, որոնք բոլորովին անսովոր են հայոց գրականութեան և չափազանց կասկածելի է, թէ որևէ տեղ մեր գրականութեան մէջ դործածուած լինին դրանք առանց անմիջական բացատրու-

թեան։ Ճիշտ է, յարգելի հեղինակը կարծես առաջուց գուշակեալով գալիք մեղադրանքը, արդարանում է գրելով հետևեալը. «Անշուշտ բառարանիս մէջ կը տանուին բառեր, որոնց մասին ես չկարողանամ ասել, թէ մեր որ հեղինակը իր որ գրուածքում է գործ ածել, կամ գուցէ դեռ ևս հայ տառերով այդ բառը տպւած չինի, բայց այդ հանգամանքը ինձ չարգելեց գրանք էլ մէջ մտցնել. օրինակ, զուցէ գեռես մեղանում ոչ մի տեղ չկայ գործածուած արսէնտէիզմ, անէսթէզիա... բայց ես համոզուած եմ, որ գրանք այսօր կամ վաղը անխուսափելիօրէն պիտի գործածուին, եթէ մէկը ուզենայ մի բան գրել գիտութեան այն ճիւղերից, որոնց գրանք պատկանում են. Ուստի այդ բառերն էլ տեղ են գտել բառզրքում։ Ինձ մնում էր բառերի ընտրութեան ժամանակ իրեւ չափ ընտրել իմ գիտութիւնս, զուրս թողնելով միայն խիստ մասնագիտական արհեստագիտական բառեր։ Այդ արդարացումը սակայն բաւականացուցիչ չէ. ինչ կը նշանակէ վաղը կամ միւս օրը կարող են գործածուել. չէ որ զուք կազմում էք բառարան այն օտար բառերի, որոնք գործ են ածուել և գործ են ածում հայոց գրականութեան մէջ. էլ ինչը ձեզ իրաւունք էր տալիս ձեր բառարանը ծանրաբեննել մեծ քանակութեամբ բառերով, որոնք չեն գործ ածուել և չեն գործածում և ով է իմանում, երբ կը գործածուին։ ԶԵ որ այդ դէպքում բառերի ընտրութեան գործը շատ ենթակայական և կամայական է դառնում։ Դուք զում էք «շատ բառեր այսօր կամ վաղը անխուսափելիօրէն պիտի գործ ածուին, եթէ մէկը ուզենայ մի բան գրել գիտութեան այն ճիւղերից, որոնց դրանք պատկանում են»։ այս վերջին նախադասութիւնից յետոյ մանաւանդ ընտրութեան որնէ հիմք իսպառ չքանում է. որովհետեւ ամեն բոլէ կարող է մէկը գտնուել, որ ձեռք տայ կամ որնէ բան զրի գիտութիւնների այս կամ այն ճիւղից, իր աշխատութեան մէջ գործածի այդ ճիւղի մէջ ընդունուած և տարածուած տերմինները. պ, Յարութիւննեանի բառարանը համաձայն հեղինակի յայտարարութեան այդ դեռ չգրուած յօդուածների տերմիններն ևս պիտի բացառիկ լինեն այսպիսի բառեր։ Այսպիսի բառերը չեն, ոչ էլ գիտնականներ։ Եւ դա շատ պարզ ու հասկանալի է. մեղանից ոչ ոք բարձր մաթեմաթիկայի, աստղարաշխութեան,

Սակայն այդ նպատակը ոչ միայն անկարելի է, այլ և միւնգամայն աւելորդ. որովհետեւ օտար բառերի մի բառարան չպիտի ամփոփի իր մէջ բոլոր գիտութիւնների և դիսցիպլինների տերմիններն ու դարձուածքները, այլ միայն այնպիսիները, որոնք գործածական են այդ լեզուի մէջ, գործածական այդ երկրում նաև այնպիսի մարդկանց յօդուածներում, որոնք մասնագէտներ չեն, ոչ էլ գիտնականներ։ Եւ դա շատ պարզ ու հասկանալի է. մեղանից ոչ ոք բարձր մաթեմաթիկայի, աստղարաշխութեան,

Փիզիկայի, հոգերանութեան, սաղմնաբանութեան մասնագիտական տերմինները օտար բառերի բառզրքի մէջ չի փնտրի, որտեղ եթէ նրանք լինեն էլ, շատ համառօտ ու անորոշ, թերի բացատրուած կըլինեն, այլ հանրադիտակ, մասնագիտական բառարաններում կամ համապատասխան գիտութիւնների մէջ։ Պարոն Յարութիւննեանը ցանկացել է այս տարրեր և բազմաթիւ նպատակներին մի անդամից հասնել. և բնականօրէն նրան չէ յաջողուել այդ եւրոպական և ոռւսական բառարաններն աչքի անցկացնելիս նա իւր բառզրքի մէջ արտագրել է բազմաթիւ բառեր, որոնք այդ ձեռվ հաւանօրէն առաջին անգամն է, որ լոյս են տեսնում հայ տառերով և ոչ մի կապ և գործածութիւն չունին հայոց գրականութեան մէջ. իմ ասածը հիմնաւորելու համար օրինակների շարքը ես մի փոքր կերկարացնեմ.

ազնողի	ալարմիստ	անէսթէզիա
աղաչիօ	ալիբի	անթրոպոգնի
աղ հօկ	ալէգրօ	և անթրոպուրառով
աղբեսատ	ալիգատօր	բարդուած բոլոր բառերը
աղբեսանտ	ալմէնդէ	անտի մասնիկով բարդուած համարեա բոլոր
աղբէտ	ալպարի	ուած համարեա բոլոր
աղօպտացիա	ակեֆալիա	բառերը.
աղօրացիա	ակլեմատիզացիա	անտըրշա
աղիատ	ակսէլբանդ	անւըլոպ
աղիլ	ակրօստիխօն	առոտոպսիա
աժիօ	ակցէպտացիա	ապաշ
աժիօտած	ամանդըման	ապատրիստ,
աժուր	անզրոմարիա	ապատրիզմ
ալագեօր	անզրոփորիա	ապարէնտ
ալարմ	անէմոլոգիա	ապէնդիցիա
արիվիդէրիչէ	արրօնդիրունդ	աւթափա
արիօզօ	աւանտի	աֆինիտէտ
արխօլոգիա	աւէրզիա	աֆֆրօդիզա

Թերեւս յաջողուի պ. Յարութիւննեանին այդ և դրանց նման ուրիշ բազմաթիւ բառերից այս կամ այն բառը այս կամ այն յօդուածի մէջ գործածուած ցոյց տալ մեզ: Բայց ինդիբը դրանով չի փոխւում երրէք: Ես կարող եմ վաղը մի յօդուած գրել միջնադարեան պապերի հերարխիայի կամ ֆէոդալականութեան մասին և բնականօրէն այդտեղ՝ այդ մասնագինական յօդուածիս մէջը գործ կածեմ զուտ մասնագիտական գարձուածքներ և տերմիններ, որոնք իսկոյն և եթ հէնց նոյն այդ յօդուածի էլ մէջ անշուշտ պիտի բացատրուին: Եւ ոչ մի բառարանագրից չի պահանջուի, որ այդ զուտ մասնագիտական տերմինները, որոնք

առանց բառարանի հասկանալի են համապատասխան յօդուած-ների մէջ կամ որոնելի են համապատասխան մասնագիտական բառարաններում, — ասում են ոչ մի բառարանագրից չի պահանջուի որ նա այդ տերմիններն ևս մտցնի իր բառարանի մէջ։ Օտար բառերի բառարանում աւելորդ «խամ» չպիտի լինի և այնտեղ բացատրուած բառերը պէտք է իրօք գործածական լինին այդ լեզուի մէջ, պէտք է քաղաքացիութիւն ստացած լինին։ Այնպիսի բառեր, ինչպէս օրինակ

աժան- [ոստիկան, քաղաքապահ]

արիվիդերիչ [ցտեսութիւն!!]

աւերգիա [զզուանք, նողկանք, խորշանք]

արբոնդիրունգ [կլորացումն...]

և դրանց նման շատ շատերը մինչև օրս քաղաքացիութիւն չունին հայոց գրականութեան մէջ և ոչ մի «անխուսափելիութիւն»։ Հի ստիպի, որ այդպիսի բառերը այսօր կամ վազը մուտք գործեն հայոց լեզուի մէջ... Օտար բառերի բառդիրքը չպիտի ձգտի մասնագիտական բառարանների դերը կատարել։

Մինչև այժմ ես խօսում էի այն եւրոպական բառերի մասին, որոնք այս բառերի մէջ կային և որոնք այդտեղ չպիտի լինէին։ Նոյն բանը շատ աւելի մեծ չափով պէտք է ասեմ թուրքերէն, արաբերէն, պարսկերէն ահազին քանակութեամբ բառերի մասին, որոնք իրը թէ մեր գրականութեան մէջ գործ են ածւում։ Այստեղ ես արդէն բառեր չեմ բերի, որովհետև դրանք ոչ թէ միայն սիւնակներ, այլ ամբողջ երեսներ են, ուստի կը բաւականանամ մի երկու օրինակով։ Հետաքրքիր է, եթէ անկետանէինք մեր գրականութեան մէջ այժմ յայտնի հեղինակներին և հարցնէինք թէ հետևեալ բառերից արգեօք որևէ մէկը մեր գորականութեան մէջ կարելի է գործածական համարել-ինչ կը պատասխանէին։ Որ հայ մատենագիրը և կամ յօդուածագիրը կառող էր գործ ածած լինել կամ պ. Յարութիւնեանը որտեղ կարդացած կը լինէր բառեր, որպիսիքն են

աղալաթ (արդարադատ)

աղամաղառշմաղ (մարդավախ)

աղէփուրզ (անամօթ)

աղըմ (քայլ)

ալիշ-վերիշ (առուտուր)

և բազմաթիւ ուրիշները.

Պ. Հը. Աճառեանը կարող էր և պէտք է որ այդ բառերը և դրանց նման շատ շատերը մտցնէր իր բառարանի մէջ, որովհետև նա կազմում էր «թուրքերէնէ փոխառեալ բառեր հայերէնի մէջ» (1902)։ Նա պիտի քաջ տեղեակ լինէր բարբառների, նրանց բառագրիչ մասերի հետ։ Պ. Յարութիւնեան ոչ մի գործ չունի-

բարբառների հետև՝ նա պիտի երկոր և տոկուն աշխատանքով աչքի անցկացնէր ամենից առաջ մեր վերջին տաճնամեակների եթէ կարելի էր բօվանդակ զբականութիւնը-կամ մօտաւորապէս այդքանը և նշանակէր այդուղ պատահածը ու ապա այդ բառարանը ու բառերի նշանակութիւնը ստուգէր արդէն եղած ընդհանուր և մասնագիտական-յատուկ բառարանների օգնութեամբ Այս ժամանակ պ. Յարութիւնանի բառարանից բազմաթիւ թուրքերն, արարերէն, պարսկերէն բառեր, որոնք գործածական են մեր այս կամ այն բարբառի մէջ, բայց բոլորովին քաղաքացիութիւն չունին մեր զբական լեզուի մէջ, դուրս կը մնային այդ բառարանից:

4. Այս բառարանի զլիատոր պակասութիւնները այդ երկու կէտերն էին, որոնց մասին բաւականին ընդարձակ խօսելցի. — Ճշգտում հանրագիտութեան և բառերի ընտրութեան մէջ անսփառեմ ու կամայական վերաբերմունք. Միւս պակասութիւնները աւելի քիչ են և երկրորդական: Այսպէս օրինակի համար բացատրութիւնների մէջ աչքի են ընկնում հետեւեալ սխալ մեկնութիւնները.

**Ակադեմիկոս, ակադեմիկ կամ ակադեմիս=ցեմարանական.** Դիտական կանառի կամ միութեան պատկանող. ակադեմիսիայի անդամ. կանառորդ. Սխալն այստեղ ակադեմիստ և ակադեմիկ բառերի իրար հետ շփոթման մէջն է: Դրանք միևնոյն բաները չեն, այլ տարբեր ակադեմիկ նշանակում է որևէ գիտական հաստատութեան կամ կանառի անդամ, իսկ ակադեմիստ՝ որևէ ակադեմիսիայի ուսանող:

**Ալիերնատիւ=Կամ այս կամ այն, մի այնպիսի վիճակ, երբ մարդ երկու հնարաւորութիւնից մինը հարկադրուած է ընտրել Այսպիսի երկու դատողութիւն, որոնցից մէկը կարող է միւսի տեղ դըրւել, առանց որ դրանից միտք փոխւի»: — Սխալն այստեղ վերջին նախագասութեան մէջ է, բերենք ալտերնատիւայի մի օրինակ. կամ կարճ կեանք փառաւոր ընթացքով և կամ անփառունակ երկարաւու կեանք: Այստեղ երկու դրութիւն կայ, որոնց մէջ պէտք է ընտրութիւն անել. և այս կամ այն կերպ ընտրութիւնից անշուշտ կը փոխուի ընտրողի վիճակը. չէ որ միենոյնը չեն փառաւոր ու անփառունակ կեանքը, կամ երկար ու կարճ կեանքը:**

**Ալթիմիա=Կարծեցեալ արհեստ հասարակ մետաղները ոսկի գարձնելու իմաստութեան քարի միջոցով»: — Նախ արհեստը կարծեցեալ չէր. այդ զբաղմունքով մարդիկ պարապած էին և հաւատում էին որ հնարաւոր է զրա միջոցով իրանց նպատակներին համել. և ապա ալքիմիկուները հասարակ մետաղները ոսկի էին ուզում դարձնել ոչ թէ իմաստութեան քարի միջոցով. այլ հէնց իմաստութեան քարն ինքն էր նրանց որոնումների իսկական առարկան. նրանք չունէին այդ քարը և որոնում էին գտնելու:**

Բիլլ=Անգլիայում օրէնք. օրինագիծ, որ երեք անգամ կարդացւում է երկու պալատներում էլ և աղա առաջարկւում է թագաւորին իրեւ ժողովրդական ներկայացուցչութեան վճիռ:=Այս բացատրութիւնն ևս սխալ է. իւրաքանչիւր օրինագիծ կամ բիլլ օրէնք դառնալուց առաջ պէտք է այդ նկարագրուած ճանապարհով անցնի. բայց հօ անպայման իւրաքանչիւր բիլլ օրէնք չի դառնում. անգլիական պարլամենտը շատ է տեսել այնպիսի բիլլեր, որոնք մի անգամ կարդացուելուց յետոյ յետ են մղուել և այլ ևս իսկի չեն առաջ եկել:

Բիւրգեր=Միջին դարերում բուրգէրում ապրող արհեստաւոր և առևտրական դասը: Այժմ՝ քաղաքացին Բիւրգէր, բիւրգէրական և այլն այժմ հոմանիշ է դարձել բուրժուա, բարժուական և այլն բառերին:

Ինձ թւում է, որ այժմ ամեն քաղաքացի բիւրգէր չէ, մասւանդ թէ բուրժուա չէ: Ճիշտ է, բուրժուա բառը ստուգաբանօրէն ծագել է բիւրգէր բարից, բայց դրանց իմաստներն այժմ բոլորովին նոյնը չեն և զգալի տարբերութիւններ են հանդէս բիրում: Երբ մենք ասում ենք-այս ինչ մարդը բիւրգէրական կիանքով է ապրում, միւսը՝ բուրժուական-դրանով հասկանում ենք, որ առաջին դէպքում աւելի սահմանափակ, չափած ձեած կիանքի հետ գործ ունինք, խաղաղ ու անվրդով. իսկ բուրժուան վարում է աւելի լայն ու շքեղ կեանք, աղմկով լի: Համապատասխան տարբերութիւն կայ նաև բիւրգէրի և բուրժուայի աշխարհայեցքի մէջ:

Ակցիոն=բառի բացատրութեան մէջ աւելորդ է գործունէութիւն սահմանումը. ակցիոն չի կարող երբէք գործունէութիւն նշանակել:

Արմադա=Հի նշանակում անպատճառ պատերազմական նաւատորմիդ իսպանիայում. այլ ուղղակի պատերազմական նաւատորմիդ-լինի դա ուսական թէ իսպանական. միայն բառն է, որ իսպանական ծագում ունի:

Բացատրութիւնների մէջ կան արտայայտութեան սխալ եղանակներ, որոնցից միտքը աւելի մթնանում է. օրինակ ազգոնոմ, ալբոմ, ալտրուիզմ, ալլումինիում, ակրոբատ, բաքու . . . բառերի մէջ: Մի շաբք բառեր էլ թերի են բացատրուած-իմաստի միայն մի մասն է մէջ բերուած. յաճախ մոռացուած է բառի այս կամ այն իմաստը, որը երբեմն աւելի կարեոր է լինում քան միւս՝ դրուած իմաստը: Բացատրութեան այդպիսի թերութիւն՝ կիսատութիւն նկատելի են հետեւեալ բառերի մէջ:

աղմենիստրացիա

ապլոմբ

ալկոհոլիզմ

ասսիգնացիա

ամերիկանիզմ

ասիմիլացիա

Անատոլիա

ատակա

անտրւիւ  
անֆաս

արխօլոցիա  
բիւրոկոտիզմ..

**Պատահում են և բառերի այնպիսի բացատրութիւններ, որոնց մէջ աչքի է ընկնում աւելորդաբանութիւն, երկարացրած և ճապաղ մեկնութիւն. գլխաւորը երկրորդականից զանազաննելու՝ իւրաքանչիւրին իւր արժանի տեղը տալու աւելի պակաս ջանք: Մյու պակասութիւնն յատկապէս աչքի է ընկնում ագէնտ, անարխիզմ, ապօլօցիա, արբիտրաժ, արէնդ, արխիւ, աւտորիտէտ, աֆէկտ... բառերի մէջ: Մի երկու օրինակ.**

**Աւտօրիտէտ=**Հեղինակութիւն, հեղինակաւոր անձն, որի խօսքը կշիռ ազգեցութիւն ունի. — Մի մարդ, որի խօսքին նշանակութիւն են տալիս նկատի առնելով նրա գիտութիւնը և փորձառութիւնը...

Երկրորդ նախադասութիւնն այստեղ միանդամայն աւելորդ է, որովհետև լիովին պարունակում է առաջին սահմանումի մէջ: Պարզ է, որ այն մարդը, որի խօսքը կշիռ և ազգեցութիւն ունի, նրա խօսքին նշանակութիւն կըտան: Երկու գատողութիւնների տաւալողիան ակներեւ է:

**Ապօլօցիա=**Ճատագովութիւն, պաշտպանողական ճառ, գրութիւն: Մի ուսմունքի գաղափարի համար պաշտպանողական խօսք գրաւոր կամ բանաւոր:

Այստեղ ևս երկրորդ նախադասութիւնը աւելորդ է. որովհետև ոչ միայն ամրողովին պարունակում է առաջին դատողութեան մէջ, այլ նրա մի մասն է: Յիշաւի ճատագովական-պաշտպանողական ճառ կարող է գրուել կամ ասուել ոչ միայն որևէ ուսմունքի գաղափարի համար, այլ և որևէ մարդու, առարկայի համար: Բացատրութեան առաջի մասը աւելի լրիւ է և ամբողջական, երկրորդը՝ թերի և աւելորդ:

Բացատրութիւնների մէջ հեղինակը ուղիղ և կանոնաւոր հայերէնի դէմ համեմատաբար քիչ է մեղանչում: Ես նկատեցի մի երկու դէպք միայն.

**Ռուտաֆոր=**այն անձը բեմի վրայ, որ տալիս է դերասաններին և պատրաստում է նրանց համար խաղում հարկաւոր բուլր իրերը: Եթէ ևս այդ խօսքի նշանակութիւնը ուրիշ տեղից չիմանայի, տրուած բացատրութիւնից ոչինչ չէի հասկանայ:

**Անարխիզմ=**.... այն հասարակագիտական վարդապետութիւնը, որը ամենակատարեալ հասարակակարգը համարում է այն, որ անհատը ունի ամենալայն ինքնօրէնութիւն. .

**Արիստօկրատիա=**.... Պետական իրաւունքի մէջ՝ գլխաւորաբար հին Յունաստանում գոյութիւն ունեցող այն վարչական հղանակը, որով իշխանութիւնը պատկանում էր արտօնեալ լաւագոյն համարուած փոքրամասնութեան...

Այս երեք օրինակների մէջ ևս սխալն ակներեւ է այնքան, որ կարիք չկայ այլ ևս բացատրելու և երևան բերելու:

Մի երկու կէտ ևս և առանց այն էլ երկարացած գրախօ-

սականս կը փակեմ:—Այս բացատրական բառզբի մէջ նշանակուած են սովորաբար բառերի ինչ լեզուից առնուած լինելը: Օրինակ «ագիտացիա» բառի դիմացը գրուած է փակագծերի մէջ (լատ), որ նշանակում է, լատիներէնից վերցրուած: Այդ սխալիմի մէջ ևս մի քանի անկանոն դէպքեր կան: օրինակ Ազնօքի բառի դիմացը գրուած է (յուն.), յունարէն բառը այդպէս չի վերջանում, այլ ազնօքի ասում են գերմանացիք կամ ֆրանսիացիք: Աժիտացիա բառի դիմացը գրուած է (ֆր.) այն ժամանակ պէտք էր գրել ֆրանսիական վերջաւորութեամբ-աժիտասիոն: Կամ թէ Անբրոպոգինից բառը եթէ յունարէնից վերցրուած էր համարում պիտի գրէք անթրոպոգէնիա, իսկ եթէ ֆրանսերէնից այն ժամանակ անթրոպոգէնի: Այդ կարգի անկանոնութիւնները բազմաթիւ են:

Ուղղագրութեան նկատմամբ ինձ թոյլ եմ տալիս մի նկատողութիւն անել. հայերէնում սովորաբար ընդունուած է ամեն տեղ, որտեղ է հնչիւնն է լսում, գրել Ե. դա ընդհանուր կանոն է. իսկ է-ի գրութեան սահմանները շատ փոքր՝ են և չափուած: Մինչեւ այժմ մեծ մասամբ այդպէս ընդունուած է եղել մեր մէջ թէ մեր սեփական և թէ օտար բառերի գրութեան մէջ: Ինձ թուում է, թէ լաւ կը լինէր պահել այդ ձեզ և աշքի համար առանձին արգելքներ հանդէս չը երել-գրելով ակադէմիա, ազէնդ, ապէլսին քանի որ այդ և դրանց նման բազմաթիւ այլ բառերի մէջ է տառը բոլորովին նոյն հնչիւնն ունի, ինչ որ բարեկամ, ընկեր, ճեմարան... բառերի մէջ: «Էժան ազգասիրութեան» ակտ չենք կատարում մենք գրանով, ինչպէս պ. Յարութիւննեանը յառաջարանում ասում է, այլ վազուց ընդունուած, ոչ ոքի վնաս չը երող աւանդական մի գրութիւն շարունակում ենք. Նոյնը կասէի ես նաև ո-ի և օ-ի նկատմամբ: Դժբախտաբար ինձ պակասում է լեզուաբանական հմտութիւնը-խնդիրը նաև լեզուաբանական տեսակէտից քննելու համար:

5. Ինչպէս սկզբում ևս նկատեցի իմ բոլոր նկատողութիւններս անում եմ միայն Ա. և Բ. տառերի համար. միւս տառերը շատ հարեւանցի եմ կարդացել:

Պ. Յարութիւննեանի բառգիրքը այդ պակասութիւնների հետ ունի նաև շատ առաւելութիւններ, որոնք հմուտ աչքից չեն փախչի երբէք. ընդհանուր առմամբ բացատրութիւնները ուղիղ են ու հեշտ հասկանալի, սահմանութեանը կարճ ու ամփոփ, գործածած լեզուն կանոնաւոր ու չափուած: Անշուշտ պ Յարութիւննեանը ահազին աշխատանք է գրել այս բառարանի մէջ, մանրազնին ու շատ անգամ անհետաքը իլ աշխատանք. և նրա բառարանը՝ ուղղուած և մի փոքր բիւրեղացած՝ անշուշտ մեծ ծառայութիւն կը մատուցանէ հայ ընթերցող հասարակութեանը և կարժանանայ սրա շնորհակալութեանը, որին և նա արժէ ընդհանուր առմամբ:

Գէորգ Ալբունեան